

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«Գեղարքունիքի
տարածաշրջանային պետական
քոլեջ» ՊՈԱԿ-ի տնօրենի
2016 թ. հ. « 29 »
թիվ 69-Կ հրամանով



**« ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ
ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ »**

ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ՊԱՇՏՈՆԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

«ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ»
ՊՈԱԿ-Ի ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԴՍԱՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐԻ

Զ. Կարսյան

1. ՊԱՇՏՈՆԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ՝ Զինվորական ղեկավար:

2. ՊԱՇՏՈՆԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ ԸՍՏ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ՝
Զինղեկ:

3. ՄԵԽԱՆԻԿԻ ՊԱՇՏՈՆԻ ԴԱՍԱԿԱՐԳԻՉԸ՝

ա. մասնագիտության մասնագիտացման կոդը՝ 1060005,

բ. գրադուներին դասակարգչի կոդը՝ 7222:

4. ԶԻՆՂԵԿԻ ՊԱՇՏՈՆ ԶԲԱՂԵՑՆՈՂ ԱՆՁԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՊԱՏՐԱՍՏՎԱԾՈՒԹՅԱՆ ՆԿԱՏԱՄԲ ՊԱՀԱՆՁՆԵՐԸ՝ Բարձրագույն մասնագիտական կրթությունն էլ սպայական կոչում:

5. ԶԻՆՂԵԿԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ՝

Զինղեկի աշխատանքը համարվում է ծանր աշխատանք:

6. ԶԻՆՂԵԿԻ ՊԱՇՏՈՆՈՒՄ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆՇԱՆԱԿՈՒՄԸ՝ Զինղեկի հետ աշխատանքային պայմանագիրը կնքում և աշխատանքային պայմանագիրը լուծում է /զինղեկին աշխատանքի ընդունում և աշխատանքից ազատում է/ կազմակերպության տնօրենը:

7. ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄԸ՝ Զինղեկի պաշտոնն ընդգրկված է կազմակերպության կառավարման համակարգում:

8. ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ՝

Զինղեկն անմիջականորեն ենթարկվում է կազմակերպության տնօրենին:

9. ԶԻՆՂԵԿԸ ՊԵՏՔ Է ԻՄԱՆԱ՝

9.1 Ռազմահայրենասիրական միջոցառումների անցկացման ձևերը և կարգը:

9.2 Տարածաշրջանում գործող զինվորական զորամասերի տեղաբաշխվածությունը և դրանց հետ աշխատելու մեթոդները:

9.3 Բանակցությունների անցկացման ձևերը և մեթոդները:

- 9.4 Ռազմահայրենասիրական դաստիարակության մասսայականացման ու քարոզման ձևերը և մեթոդները:
- 9.5 Տարբեր տեսակի ռազմական միջոցառումների տեխնիկական - տակտիկական ցուցանիշները և աշխատանքի նկարագիրը:
- 9.6 Դասերի անցկացման ժամանակակից մեթոդները:
- 9.7 Դասամատյանի լրացման կարգը:
- 9.8 Մանկավարժության և հոգեբանության հիմունքները:
- 9.9 Միջանձնային հարաբերությունների ձևավորման սկզբունքները:
- 9.10 Բանակցությունների վարման ընդհանուր կանոնները:
- 9.11 Սովորողների մոտիվացիայի բացահայտման, վերահսկման և կառավարման մեթոդները:
- 9.12 Բազային մասնագիտական ոլորտը պետք է լինի կրթական հաստատության դասավանդող մասնագիտական առարկայի կամ դրան հարակից ոլորտ:

10. ԶԻՆՂԵՎԸ ՊԵՏՔ Է ԿԱՐՈՂԱՆԱ՝

- 10.1 Կազմակերպել և իրականացնել ռազմահայրենասիրական բնույթի քարոզչություն և միջոցառումներ:
- 10.2 Վարել հանրակրթական մակարդակում «Նախնական զինվորական պատրաստվածություն» առարկա՝ նախատեսված ծրագրի ամբողջ ծավալով:
- 10.3 Կազմել ռազմահայրենասիրական բնույթի միջոցառումների տարեկան ծրագիր՝ համապատասխան ծախսերի և ֆինանսավորման աղբյուրների նախանշումներով:
- 10.4 Ինքնուրույն աշխատել համակարգչի վրա՝ օգտագործելով պարզագույն ծրագրային համակարգերը:
- 10.5 Շփվել գործընկերների հետ որևէ օտար լեզվով՝ պարզ խոսակցական մակարդակով:

11. ԶԻՆՂԵՎԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ՝

- 11.1 Ուսումնական հաստատությունում ռազմահայրենասիրական միջոցառումների կազմակերպման մասնակցություն:
- 11.2 Արտակարգ իրավիճակներում ուսումնական հաստատությունում տարհանման իրականացում

12. ԶԻՆՂԵՎԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ՝

12.1 Հաստատության սովորողների շրջանում զինվորական դաստիարակության իրականացում:

12.2 Սովորողների մասնակցությամբ տարաբնույթ ռազմահայրենասիրական միջոցառումների կազմակերպում և անցկացում:

12.3 Սովորողներին ռազմական տեխնիկայի, զինվորական ծառայության առանձնահատկությունների և դրանց տիրապետելու կարևորության պարզաբանում:

12.4 Զինվորական ստորաբաժանումների այցելությունների կազմակերպում:

12.5 Պատերազմի վետերանների և զինծառայողների հետ հանդիպումների կազմակերպում:

12.6 Արական սեռի սովորողների և հաստատության աշխատողների զինվորական հաշվառման ապահովում:

12.7 Հաշվառման ժամանակ ծագած հարցերի վերաբերյալ խորհրդատվության մատուցում:

12.8 Տարեկան միջոցառումների պլանի կազմում:

12.9 Զինվորական դաստիարակության աշխատանքների իրականացման ժամանակ գործատուների և տարածաշրջանի բարեգործների ներգրավում:

1. ԶԻՆՂԵՎԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ՝

Կրում է պատասխանատվություն հաստատության սովորողների և աշխատակիցների շրջանում ռազմահայրենասիրական դաստիարակության քարոզման կազմակերպման և համապատասխան բնույթի միջոցառումների իրականացման համար:

ԱՇԽԱՏԱԺԱՄԱՆԱԿԻ ՌԵԺԻՍՆԸ՝

Զինդեկի աշխատաժամանակի ռեժիմը սահմանվում է կազմակերպության ներքին կարգապահական կանոններով:

Համաձայնեցված է

Անմիջական ղեկավարի հետ՝ _____

/ստորագրությունը/

/անվանատառը, ազգանունը/

<< _____ >> << _____ >> 201 թ.

Աշխատանքի նկարագրությանը

Ծանոթացա՝ _____

/ստորագրությունը/

/անվանատառը, ազգանունը/

<< _____ >> << _____ >> 201 թ.